

Ա. Ս. ԻճԵԿՅԱՆ

ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ԵՎ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

Հիսուն տարի առաջ, 1912 թ. հայ տառերի գյուտի 1500-ամյա և տպագրության 400-ամյա կրկնակի հոբելյանները հավերժացնելու համար արժարժվում է հայագիտության ֆունդ հիմնելու, հայկական ակադեմիա և համալսարան ստեղծելու գաղափարը:

Նշանակալի է, որ այդ գեղեցիկ գաղափարի հղացումն ու արժարժումը կապված է Հովհ. Թումանյանի անվան հետ:

Դա եղել է մեր ազգային մեծ բանաստեղծի շքեղ երազներից մեկը, որի հիմքը իր ժողովրդի լուսավոր գալիքի նկատմամբ նրա անսահման ու անսասան հավատն էր: Նույն 1912 թ. Հայ գրողների ընկերության առաջին գրական երեկույթը Թումանյանը փակում է հետևյալ ոգեշունչ խոսքով.

«...Մեծ է մեր հավատը հայ ժողովրդի կուլտուրական ուժի ու նրա պայծառ ապագայի վրա, որ հենց ինքը՝ հայ ժողովուրդը իր ազգային առասպելը մեջ նմանեցրել է մշտավառ կանթեղի, որ սրբազան Արագածի վերեւից կախված է երկնքի բարձրությունից, ու ոչ մի ձեռք չի հասնիլ նրան, ոչ մի փոթորիկ չի հանգցնիլ նրան: Նա հայ ժողովրդի հույսն է՝ անմարելի ու մշտավառ»¹:

Թումանյանը հոգու աչքերով տեսնում էր վաղվա իր հայրենիքը՝ ճգն ու փռված՝ ազատագրված ո՛չ միայն քաղաքական բռնակալությունից, այլև մարդկային հոգու թռիչքները կաշկանդող խավարի ու տգիտության կապանքներից:

Լուսավորության թումանյանական ըմբռնումը բնավ չէր սահմանափակվում ժողովրդի կրթական-կուլտուրական ընդհանուր մակարդակը բարձրացնելու ծրագրով: Հայրենիքը որպեսզի նորանար ու հզորանար՝ պետք է նվաճեո ու զարգացներ պիտությունները: Թումանյանը խոր հավատով էր լցված դեպի գիտության վերափոխիչ ուժը, գիտության, որը նվաճելով, մարդու առաջ պիտի բացվեին երկրի և տիեզերքի բոլոր գաղտնիքները: Բավական է հիշել «Հաղարան բլբուլ» անավարտ մոնումենտի հայտնի հատվածը գիտության հրաշագործ զորության մասին:

Թումանյանը առանձնակի հետաքրքրություն է ունեցել հումանիտար գիտությունների նկատմամբ և հատկապես զբաղվել է հայագիտության խորն գիրներով:

Նվ դա բնավ պատահական չէ:

Քսաներորդ դարի առաջին քսանամյակին հայ ժողովուրդն ապրում էր իր բազմադարյան կյանքի ամենաողորմական, ճգնաժամային դրվագը, կանգնած էր իր պատմական մեծ երթուղու ճամփաբաժանին: Ազգության ձևավորման, կազմակերպման շուրջ հարյուրամյա պրոցեսը դեռևս չէր ավարտվել, բայց մոտենում էր իր ավարտին:

1 Հովհ. Թումանյան, երկերի ժողովածու, IV հատ., 1951, էջ 445:

Ռուսական առաջին հեղափոխությունը հայոց պատմության և իրականության խորագիտակ բանաստեղծին հույս էր ներշնչում, որ Ռուսաստանը և վերջին հարյուրամյակում քաղաքական իրադարձությունների զարգացման օրինաչափությամբ նրա ճակատագրի հետ անխղճիորեն կապված հայ ժողովուրդը գտնվում են մի նոր պատմաշրջանի նախօրյակին: Թումանյանը հավատում էր և համոզված էր, որ հեղափոխական Ռուսաստանն ապահովելու է նոր ու հզոր իր հայրենիքի գոյությունը:

Ինչպես ցույց է տվել հանճարեղ Լենինը Տոլստոյի օրինակով, Թումանյանը դարաշրջանի մեծ արվեստագետներից մեկը, եղել է հեղափոխության հայելին հայ իրականության մեջ, իր ստեղծագործությամբ արտացոլել է ազդային և սոցիալական ազատագրության ձգտող հայ ժողովրդի տենչերն ու ոգորումները, իմաստուն ներքնատեսությամբ գուշակել է իր հայրենիքի և «հանուր կյանքի արշալույսը»:

Ռուսական առաջին հեղափոխության հաջորդող մեկ և կես տառնամյակում Թումանյանի խորհրդածությունները ազդային խնթնաճանաչման վերաբերյալ, կարելի է հանգեցնել այն հետևություն, թե անցման շրջան ապրող մեր ժողովուրդը, իր պատմական զարգացման նոր դարաշրջանի նախադռներ, անհրաժեշտաբար հանրադրման պետք է բերի անցյալը, վերիմաստավորի ու վերադնահատի այն:

Այս իմաստով էլ Թումանյանը, առաջին հերթին, դնում է հայոց պատմությունը ստեղծելու խնդիրը:

Անկարելի է ըմբռնել ժողովրդի ներկան, անկարելի է կանխատեսել և ապագան՝ առանց նրա անցյալը, պատմությունն իմանալու:

«Վաղուց է ասված,— գրում է Թումանյանը,— թե անցյալի պատմությունը մի յուսատու լապտեր է, որ ամեն մի ժողովուրդ ձեռքին պետք է ունենա իր ճամփեն անմոլոր գնալու համար»²:

«Էն ժողովուրդը, որ իր պատմությունը չգիտի, ուրիշ բան էլ չի իմանա»։ Եվ բնորոշ է, որ այս միտքը, որպես բնաբան, նա դրել է «Խ. Աբովյանի «Վերը Հայաստանի»-ն և 1827 թ. ռուս-պարսկական պատերազմը» իր ուսումնասիրության ճակատին:

Պատմությունը ոչ միայն դպրոց է, այլև փիլիսոփայություն, կոնցեպցիա, մեկնակետ:

Առանց պատմություն իմանալու, անկարելի է հասկանալ ինչպես տվյալ ժողովրդի, այնպես էլ նրա բանաստեղծի էությունը, անկարելի է անսխալ դատել նրանց մասին: «...Իմ սրտին շատ է ծանրանում էս ժողովրդի ճակատագիրը, սրա պատմությունը, էն սոսկալի դրաման, որ կոչվում է հայոց պատմություն, ու էն աշխարհը ևն բխում նրա գործերի վրա եղած իմ հայացքն ու մտածմունքը...»,— գրում է բանաստեղծը իր մտքերը ծուռ մեկնաբանող մի հրապարակախոսի հոգվածի առթիվ: Հոգվածի հեղինակը թեթև զրչով Թումանյանի դիրքորոշումը դեպի Ռուսաստանը համարում էր «տիրող հանգամանքների» թելադրանք, առանց խորամուխ լինելու հայ ժողովրդի պատմական կյանքի զարգացման օրինաչափությունների մեջ: Մինչդեռ բանաստեղծն իր հայեցակետը բխցրել էր հայոց պատմությունից, որի հարադատ ծնունդն էր ինքու:

2 Հ. Դ. Թ. Թումանյան, Երկերի ժողովածու, IV հատ., 10 459:

3 Նույն տեղում, VI հատ., 17 325:

«Ես առաջ եմ գալիս ոչ թե «տիրող հանգամանքներից», այլ մի արյունոտ հողից, մի անօրինակ, զարհուրելի պատմությունից, մի հողումված ժողովրդից, ուր ինձ բանաստեղծ է արել ճակատագիրը ու ներշնչել է անկեղծ լինել ամենից առաջ»⁴:

Պատմությամբ էր բացատրում Թումանյանը նաև ժողովրդի հոգեբանությունն ու բնավորությունը: «Ուրիշ ընդհանուր հանգամանքների հետ,— գիտում է նա,— զարհուրելի ծնող է եղել մեզ համար մեր պատմությունը»: Բանաստեղծը նկատի ուներ օտար բարբարոս նվաճողների տիրապետության դարեր տևող շրջանները, և գտնում էր, որ բռնակալությունների անազորույթի տակ հայ ժողովրդի կրած դառնությունները իրենց գրոշմն են գրել նրա բնավորության վրա: «Ամեն կենդանի գոյություն, որ ոտնատակ է ընկնում,— պրում է Թումանյանը,— եթե չի մեռնում՝ այլանդակվում է, դառնանում ու փշանում: Էսպես է բնության օրենքը»: Եվ որպես հաստատումն իր մտքի, բերում է ոտնատակ ընկած վարունգի թփի օրինակը, որի պտուղը դառնահամ է լինում:

Ժողովրդի պատմական դառն ճակատագիրն իր սրտին այնքան մոտ համարող բանաստեղծը թերևս գույները խտացրել ու չափազանցրել է, սակայն, չի կարելի չհամաձայնել նրա հիմնական գրույթի հետ, մանավանդ, երբ նրա բանաստեղծական խոսքը վերածենք սոցիոլոգիական լեզվի. յուրաքանչյուր ժողովրդի՝ պատմական երկարատև մի ժամանակաշրջանում ապրած տնտեսական-հասարակական-քաղաքական ուրույն կյանքն իր անխուսափելի գրոշմն է դնում նրա (ժողովրդի) ինչպես աշխարհըգացման, աշխարհայացքի, այնպես էլ հոգեբանության ու բնավորության՝ նրա մտավոր-հոգեկան ողջ աշխարհի վրա: Վերջինս, անշուշտ, անփոփոխ, մեկընդմիջտ տրված չէ. տնտեսական-հասարակական-քաղաքական կյանքի հետ նա ևս փոխվում է:

Հայոց պատմությունն էր վկայակոչում Թումանյանն ամեն անգամ, երբ հարկ էր լինում անդրադառնալու հայ ժողովրդի քաղաքական կողմնորոշման հարցին: Վերջին հարյուրամյակի քաղաքական իրադարձությունները վերլուծելով, նա ցույց էր տալիս, որ Հայաստանի ապագան որոշողը լինելու է Ռուսաստանը («Նրեկվան պատմությունը և այսօրվան իրականությունը», «Ահա թե ինչու», «Հայկական հարցն ու իր լուծումը»)⁵:

Հայոց պատմությունն էր վկայակոչում բանաստեղծը, երբ հարկադրված էր լինում հերքելու ռուս և հարյուրակային մամուլի զրպարտությունները «հայկական դավադրությունների», «հայկական սեպարատիզմի» մասին («Փորձիլը», «Московские ведомости»-ին)⁶:

Հարևան ժողովուրդների՝ միմյանց չճանաչելը, միմյանց պատմությանն ու իրականությանն անտեղյակ լինելը Թումանյանը համարում էր այն խավարը, որից ծնունդ են առնում թյուրիմացություններն ու ազգամիջյան ընդհարումները («Թյուրիմացության մութի մեջ», «Պայծառ էջեր»)⁶:

4 Հոլմ. Թումանյան, Երկերի ժողովածու, VI հատ., էջ 177—178:

5 Նույն տեղում, էջ 186:

6 Հոլմ. Թումանյան, Երկերի ժողովածու, IV հատ., էջեր 203—206, 209—215, 225—236:

7 Հոլմ. Թումանյան, Երկերի ժողովածու, IV հատ., էջեր 269—270. VI հատ., էջեր 179—182:

8 Նույն տեղում, էջեր 102—105, 421—425:

Մի այլ անդամ անդրադառնալով ազգային ինքնաճանաչման անհրաժեշտության խնդրին, նա մեծ ցավով գրում է, որ մենք ինքներս էլ մեզ չենք ճանաչում՝ ոչ մեր երկիրը, ոչ պատմությունը, ոչ ժողովրդին։ Նվ այստեղ էլ («Մեծ ցավը» հոդվածում, 1909 թ.) Թումանյանը առաջին անգամ մամուլում բարձրացնում է հայոց պատմությունը ստեղծելու խնդիրը. «Նվ դժբախտաբար,— գրում է նա,— դեռ մի կարգին պատմության գիրք էլ չունենք, թեև շատ քիչ ժողովուրդ կունենա էնքան նյութ իր պատմության համար, ինչքան մենք ունենք։ Նախնական մշուշի մեջ թաղված դարերի մասին չեմ ասում, այլ էն ժամանակների ու անցքերի, որոնց վրա ընկնում է ճշմարիտ պատմության լույսը։ Չգիտենք, Չգիտենք մենք ի՞նչ ենք եղել, ի՞նչ ենք արել, ինչու՞, և ինչ պե՞ս, ի՞նչ օրով, ի՞նչ ճանապարհով ենք էստեղ հասել... Նվ մինչև էսօր էլ չիմացանք ու չգիտենք, թե ինչ բան է էդ խորհրդավոր սփիւնքսը, որ տխուր նստած է Ուրարտուի հին արձանագրությունների կողքին՝ աչքերն արցունքով ու վշտով լիքը»։

Թումանյանն հանգում է այն հետևության, որ ազգային ինքնաճանաչման այդ բացակայությունը, ի վերջո, կարող է աղավաղել ու աղճատել ժողովրդին պատկանող առանձին անհատների հոգեկան նկարագիրը, նրանց զրկել ազգային ու մարդկային արժանապատվության զգացումից. «Նվ ի՞նչ դարմանք,— շարունակում է վշտացած բանաստեղծը,— որ էս դրության մեջ գտնվող մարդը իր անհատական խեղճությունն հեշտ կտարածի իր ամբողջ ցեղի ու նրա անցյալի վրա, կարհամարհի իր ցեղը, իր անունից կամաչի, կուրանա, իրեն թույլ կտա իր ցեղի վերաբերյալ ամեն ստորություն, և շատ-շատ կդառնա մի միջազգային ոչնչություն, որ աշխարհքում ոչինչ չի հարգում սկսած իրենից»⁹։

1912 թ. մարտի վերջերին, Պետերբուրգում, Թումանյանը գրում է «Հայոց պատմություն» հոդվածը, ուր առաջարկում է հայկական տպագրության 400-ամյա հոբելյանի առթիվ ձեռնարկվող այլ միջոցառումների հետ ղենել նաև «Հայոց պատմություն» ստեղծելու խնդիրը։ Դարձյալ ընդգծելով դրական սական անհրաժեշտությունը, բանաստեղծը գտնում է, որ հայ ժողովրդի գլխին եկած փորձանքները «դաս ու խրատ չեն լինելու նրա համար՝ մինչև որ այդ փորձերի ու փորձանքների պատմությունը չունենա աչքի առաջ ու մտքի մեջ, մինչև որ չհասկանա նրանց իմաստն ու փիլիսոփայությունը»։

Հայոց պատմությունն անհրաժեշտ է հայ ժողովրդին ոչ միայն նրա՝ համար, որ ինքն իրեն ճանաչի, այլև նրա՝ համար, որ ինքն իրեն ճանաչեցնի՝ բոլոր նրանց, ովքեր հանդես են գալիս դատողի ու դատապարտողի դերում. «Մի հայոց պատմություն,— եզրափակում է Թումանյանն իր ոգեշունչ հոդվածը,— Մի հայոց պատմություն պետք է տալ այս ժողովրդին, որ նրան դատողը դատելիս կարողանա ծանոթանալ ու այնպես դատել, որ նրան պաշտպանողը պաշտպանելիս առաջ քաշի այդ պատմությունը և այնպես պաշտպանի, որ նա ինքր պատասխանի կանչվելիս բաց անի այդ պատմությունը ու այնտեղից հանի իր պատասխանը...»¹⁰։

Այս հոդվածը մամուլին ուղարկելուց մի քանի օր հետո, Թումանյանն հարկ է համարում մի երկրորդ հոդվածում պարզաբանել, թե բնույթով ինչպի-

⁹ Հոդվ. Թումանյանի նրկերի ժողովածու, VI հատ., էջ 174—176։

¹⁰ Հոդվ. Թումանյանի նրկերի ժողովածու, IV հատ., էջ 197—198։

սին պետք է լինի վաղուց սպասված ու ցանկալի հայոց պատմությունը: Ցավոք, այդ հոգվածը մնացել է անավարտ, սևադիր վիճակում. «Հայոց պատմությունն ասելով,—դրում է բանաստեղծը,—ես չեմ հասկանում մի նոր Պալասանյանի, Չազրճյանի կամ մինչև անդամ Չամչյանի նման մի բան, այլ պատմություն բառի լայն, դիտական, եվրոպական իմաստով, մի գործ, որ մի ձեռքով ու մի երկու տարում չի կատարվում: ...Մեր պատմությունը չէ՝ որ թաղված է դետնի տակ, ավերակների մեջ, զանազան արխիվների ու դոկումենտների մեջ, լեզվի մեջ, բանավոր ու գրավոր, հին, միջին կամ նոր գրականության մեջ, օտար և հարազատ պատմագիրների մեջ... Պետք է այդ ամենը հանել դետնի տակից... ուսումնասիրել, հետազոտել, հավաքել, կանոնավորել»¹¹:

Ոչ նվազ չափով Թումանյանին հետաքրքրել և զբաղեցրել են հայագիտության մյուս ճյուղերի՝ ժողովրդական բանահյուսության, ազգագրության, հնագիտության, լեզվի և գրականության, արվեստների ուսումնասիրության խնդիրները: Դեռևս 1894 թ. գրած «Բորչավում» ուղեգրությունների մեջ խոսելով ժողովրդական ավանդությունների, առասպելների, հին զրույցների, հավատալիքների մասին, որոնցից շատերն «եկած են հին զարերից, մեր հին նախնիքների կյանքն ու սովորություններն են, նրանց մտքի և հոգու ծնունդները», Թումանյանը ցավ է հայտնում, որ դրանք հետզհետե մոռացվում, կորչում են. «Մասնավոր ապահով մարդիկ չկան, որ ժողովեն, այնպիսի հարուստներ չկան, որ ձեռնահաս մարդկանց միջոց տան ժողովելու, ընկերություն չկա, որ զբաղվի դրանով...»¹²: Ժողովրդի հոգևոր մշակույթի բանավոր այդ հուշարձանները բանաստեղծը համարում էր «մեր գրականության հարազատ հոգն ու պատվանդանը» և դրանց հավաքմանն ու ուսումնասիրությանը միշտ էլ առաջնակարգ նշանակություն էր տալիս:

Ավելի ուշ, 1910 թ. «Մի երկու խորհուրդ մեր գավառական մամուլին» հոդվածում Թումանյանը կոչ է անում հավաքել «հայրենի երկրի ժողովրդական բանավոր գրականությունը, նրա ամեն տեսակ ավանդությունները, հեքիաթները, առածները, հավատալիքները, սովորությունները» «ժողովրդի հանճարի ծնունդները», «մայրենի և ընդհանուր գրականության ու գիտության գանձարանը», դրանց մեջ տեսնելով «ժողովրդի ճշմարիտ կյանքն ու պատմությունը, բնավորությունն ու աշխարհայացքը, շնորհքն ու հոգին»: Հիշեցնելով, որ ժողովրդական այդ գանձերի հավաքման և ուսումնասիրության աշխատանքով ուրիշ երկրներում զբաղվում են գիտական ընկերություններ, ակադեմիաներ, բանաստեղծը ցավով է նշում, որ «Մեզանում չկան այդ տեսակ կարող հաստատություններ և ով գիտի երբ են լինելու»: «Մեր ազգագրական ընկերության կարևորությունը քիչ է հասկացված և քիչ մարդիկ կան նրա մեջ աշխատող»¹³:

Իներ Թումանյանը շատ բարձր է գնահատում ազգագրությունը. «առաջնակարգ կարևոր տեղ» հատկացնելով նրան «ամեն մի ազգի ինքնաճանաչության համար»: «Մեր ազգը,—գրում է նա «Ազգագրական գործը մեզանդամ» հոդվածում,—որ աշխարհքի և Արևելքի ամենահին ազգերից մինն է և ազգագրության տեսակետեց հանդիսանում է վերին աստիճանի հետաքրքրական մի

¹¹ Հոգ. Թումանյան, Երկերի ժողովածու, VI հատ., էջ 137:

¹² Հոգ. Թումանյան, Երկերի ժողովածու, VI հատ., էջ 65—66:

¹³ Հոգ. Թումանյան, Երկերի ժողովածու, IV հատ., էջ 113:

աղբյուր ուսումնասիրության, և մեր աշխարհքը, որ մի լիքը թանգարան է, ամեն տեսակի կենցաղագիտական, պատմական, կրոնական, բանահյուսական և այլ մեծարժեք նյութերի, տակավին մնում են խավարի մեջ, իրենց փառքերը ավերակների ու հողի տակ, իրենց պարծանքները՝ մոռացության ու անհայտության մեջ: Իրար հետեից անընդհատ կորչում կամ փչանում են այդ ամենքնոր կյանքի հոսանքների տակ ու նորանոր աղետների մեջ»:

Ազգագրության այս կարևոր նշանակությունից ելնելով, Թումանյանը «ամեն շնորհակալության ու ամեն խրախուսանքի» արժանի է համարում Թիֆլիսի հայոց ազգագրական ընկերությունն իր թանգարանով, «Ազգագրական հանդես»-ը և նրանց հիմնադրի՝ Նր. Հալալյանի գործունեությունը¹⁴:

Հայ նոր գրականության և գրական լեզվի պատմության ուսումնասիրությունը Թումանյանը առաջնակարգ խնդիր էր համարում՝ նրանց հետագա զարգացման տենդենցներն ու ուղիները որոշելու տեսանկյունից: 1907 թ. Թիֆլիսի ժողովրդական համալսարանում «Կյանք և գրականություն» նյութի մասին իր դասախոսությունը բանաստեղծը սկսում է նրանով, որ «Հայոց կյանքն ու գրականությունը... դեռ չեն ուսումնասիրված. երկուսի մասին էլ հակասական և ծուռ ու սխալ կարծիքներ կան ավելի շատ, քան պարզ ու բարեխիղճ ուսումնասիրություններ: Դեռ չկա նոր անցած կյանքի պատմությունը, այն օրերի, երբ սկսվեց գրականությունը: Նրբ խոսում են այդ օրերից — կարծես հին-հին դարերի մասին է խոսքը»: Իր դասախոսության մեջ Թումանյանը փորձ է անում տալու հայ նոր գրականության, առավելապես պոեզիայի պատմական տեսությունը՝ ժամանակաշրջանի հասարակական-քաղաքական կյանքի ֆոնի վրա¹⁵:

Թումանյանին, անշուշտ, հայտնի էին հայագիտության տարբեր բնագավառներում առանձին անհատների ջանքերով տարվող աշխատանքներն ու դրանց արդյունքները. ավելին. նա չի հապաղել զննատության ու խրախուսանքի իր խոսքն ասելու Հր. Աճառյանի, Գար. Հովսեփյանի, Սահակ Ամատունու, Արշ. Չոպանյանի, Նր. Հալալյանի և ուրիշների աշխատությունների մասին: Սակայն նրան չէր գոհացնում հայագիտության ընդհանուր վիճակը. դիտական հաստատությունների և պետական հովանավորությունից զուրկ լինելով, հայագիտությունն ապավինած էր անհատական նախաձեռնություններին, հատ ու կենտ մեկենասների նպաստներին:

Թումանյանը ձգտում էր հայագիտության ուղղությամբ տարվող աշխատանքները կազմակերպել, դնել ամուր հիմքերի վրա, հայագետ-մասնագետների համար ստեղծել նպաստավոր պայմաններ, և առաջին հերթին լուծել նրանց նյութական ապահովության խնդիրը:

Այս հարցերը, անշուշտ, դրադեցնում էին ժամանակի հայ առաջավոր մտավորականության ականավոր այլ ներկայացուցիչների ևս, սակայն կենտրոնական դեմքը Թումանյանն էր:

1912 թ. ապրիլի սկզբներին, երբ Թումանյանը գտնվում էր Պետերբուրգում, տեղի հայ մտավորականության մի քանի ներկայացուցիչներ, բանաս-

14 Հ. ռ. վ. հ. Թումանյան, Երկերի ժողովածու, IV հատ., էջ 146—147:

15 Հ. ռ. վ. հ. Թումանյան, Երկերի ժողովածու, VI հատ., էջ 89—108, Դասախոսության անոթիկ նյութերը տե՛ս Գրականության և արվեստի թանգարանի Թումանյանի ֆոնդում և Թումանյանի տուն-թանգարանում:

տեղծի դործուն մասնակցությունը ժողով ևն դումարում և որոշում հիմնել հայագիտության ազդային ֆոնդ և հայկական ակադեմիա: Ընտրվում է հանձնաժողով, որի մեջ մտնում են Նիկ. Մառը, Նիկ. Աղոնցը, Վարդգ. Սուրենյանը, պրոֆ. Վարդանյանը և մի քանի ուրիշներ: Ապրիլի 8-ի նամակում այդ մասին Թումանյանն իր դուստր Նվարդին գրում է. «Բայց ամենից լավն էն էր, որ երեկ գիշեր հայոց պատմության ֆոնդի ժողովն ունեցանք—ընտրվեց հանձնաժողով և գործն, ինձ թվում է, արդեն ունեցավ սկիզբը և կերթա»¹⁶:

Պետերբուրգից վերադառնալիս Թումանյանը կանգ է առնում Մոսկվայում և հայ մտավորականության շրջանում արժարժում հայագիտության ֆոնդի և հայկական ակադեմիա ստեղծելու խնդիրը: Նույն թվականի ապրիլի 26-ին Նիկ. Մառին հասցեագրված նամակում նա հայտնում է, որ Մոսկվայում «...Շատ ուրախացան այդ գործի համար... նրանք պնդեցին զրական և պատմագրական ֆոնդը միացնելու վրա և հայկական ակադեմիայի խնդիրը ավելի որոշեցին»: Նույն նամակում հայտնելով, որ նորոնտիր կաթողիկոսը զայու է Պետերբուրգ, նպատակահարմար է գտնում օգտվել առիթից և նրա աջակցությամբ խնդրել, «ծրագրից դործի անցնել»: Սակայն, ինչպես նամակից երևում է, Թումանյանն ավելի ռեալ էր համարում ակտիվոր հայագետի՝ Նիկ. Մառի աջակցությունը և մեծ հույսեր էր կապում նրա հետ. «Ինչ խոսք, որ այս ամենի մեջ Դուք լինելու եք ղլխավոր դերակատարը,—գրում է նա,—և ես սրտանյ ուրախ եմ, որ հայկական ակադեմիայի և հայագիտության դործը մեր մեջ հաջողելու է Ձեր ձեռքով, կապվելու է Ձեզ հետ, որ այնքան վայելուչ ու դեղեցիկ դալիս է Ձեր սիրելի անձնավորություններ, Ձեր դիրքին ու հայագիտությանն արած անդնահատելի, թանկագին ծառայություններին և Ձեր մեծ պատրաստությունը... Գործի ամբողջ հույսը Դուք եք: Այստեղից էլ դիմում կանենք կաթողիկոսին, բայց այս գործի կաթողիկոսը Դուք եք լինելու»¹⁷:

Հայագիտության ֆոնդի և հայկական ակադեմիայի մասին Թումանյանը նամակներ է գրում նաև հայագետներ Գալուստ Տեր-Մկրտչյանին (Միաբան) և Մեսրոպ եպ. Տեր-Մովսիսյանին. վերջինիս, որ ուղեկցելու էր կաթողիկոսին՝ նրա դեպի Պետերբուրգ կատարելիք ուղևորության ընթացքում, խնդրում է առիթը բաց չթողնել, ամեն կերպ աջակցել հայագիտության ֆոնդը դուրս բերելու համար, կրկին խոսել Մառի հետ, որի մասին հայտնում է իր հիացմունքը. «Տո, էդպես էլ լավ մարդ կլինի՝: Երբ է շատանալու էդ տեսակ մարդկանց թիվը—հա՛մ լավ մարդ, հա՛մ գիտնական»¹⁸:

Գալուստ Տեր-Մկրտչյանին ուղղած նամակում հայ տառերի գյուտի 1500-ամյա և տպագրության 400-ամյա հոբելյանը Թումանյանը «շատ պատե՛ առիթ» է համարում հայագիտության ֆոնդ և հայկական ակադեմիա հիմնելու ծրագիրն իրականացնելու համար. «Վերջապես մի գիտության օջախ ենք ունենալու»,—գրում է նա: Միաբանի, որպես հոբելյանական կենտրոնական հանձնաժողովի նախագահի վրա ընկած է տեսնում «մի շատ լուրջ գործ անելու պարտականությունը»: «Քո և մի երկու հոգու մասին շատ ենք խոսել Մառի, այդ շատ լավ մարդու հետ: Եթե կարողանայինք այն տեսակ մի գործ կատարել, այսինքն ճիշտ որ գիտության մի Ակադեմիա ունենալ և Մառն էլ այնտեղ...

16 Հ. Վ. Թ. Թումանյան, Երկերի ժողովածու, V հատ., էջ 370:

17 Նույն տեղում, էջ 370—371:

18 Հ. Վ. Թ. Թումանյան, Երկերի ժողովածու, V հատ., էջ 373:

նա ինքն էլ շատ է ուրախ և ուրախություն մար էլ ընդունեց Պետերբուրգի հանձնաժողովի անդամությունը—կանի ամեն բան, ինչ հնարավոր է... Սրանից էլ լավ դեպք չի կարող լինել, որ մենք էլ ազգովին մի շարժվենք գիտության համար...»¹⁹։

Հայագիտական ֆոնդի նպատակների մասին զաղափար կարելի է կազմել Թումանյանի «Հայագիտության ավգային ֆոնդը» հոդվածում շարադրված ծրագրից, որ, ինչպես երևում է պահպանված սևագրությունից, կազմել է բանաստեղծն ինքը, հիմք ունենալով հայագիտության ֆոնդի Պետերբուրգի հանձնաժողովի որոշումը։ Ահա այդ ծրագիրը, որ պետք է դիտվի հայագիտության և հայկական ակադեմիայի պատմության կարևորագույն չվավերագրերից մեկը.

«Հավաքել, թարգմանել, ուսումնասիրել և հրատարակել.

1. Հայկական, հունական, հռոմեական, ասորական, պարսկական, արաբական, վրացական, ռուսական և այլ ազգերի պատմագիրների տեղեկությունները հայ ազգի մասին։

2. Ռուսական, տաճկական, պարսկական և այլ տերությունների դիվանատներում—արխիվներում գտնվող հայոց պատմության վերաբերող նյութերն ու դոկումենտները։

3. Էջմիածնի ամենայն հայոց կաթողիկոսության և Սրսի ու Ախթամարի կաթողիկոսարանների, Պոլսի և Նրուսաղեմի պատրիարքարանների, այլև Հոռվմի Վատիկանի և այլ հոգևոր իշխանությունների արխիվների հայոց պատմության վերաբերյալ դոկումենտներն ու նյութերը։

4. Էջմիածնի, Վենետիկի, Վիեննայի, Պետերբուրգի, Բեռլինի, Փարիզի, Լոնդոնի և այլ տեղերի թանգարանների ու մատենադարանների հայոց պատմության վերաբերյալ նյութերն ու ձևադիրները և հայոց վանքերի ու հին հիշատակարանների արձանագրությունները։

5. Հայոց լեզվի, կրոնի, հին ու նոր լուսավոր և գրավոր գրականության, երաժշտության, նկարչության, ճարտարապետության և այլ արվեստների վերաբերյալ նյութերն ու ուսումնասիրությունները։

6. Հայն ծավալ տալ պեղումներին և հրատարակել նրանց արդյունքներն ու հետազոտությունները։

7. Հավաքել հայոց և օտար մամուլի մեջ եղած հայոց պատմության համար կարևոր նյութերն ու տեղեկությունները։

8. Բոլոր նյութերը հավաքել էջմիածին և այնտեղ հարմարություն տալ այս գործով պարապող ձևոհաս մարդկանց։

9. Սրա համար կազմել մի ընկերություն, կամ կապել այս գործը եղած ավգային հիմնարկություններից մեկի հետ։

10. Որովհետև այս ամենը երկար տարիների կատարելիք գործեր են առանձին ուշք դարձնել ըստ կարելույն շուտով տալու վերջին դարերի պատմությունը՝ հայերը Ռուսաստանում, հայերը Տաճկաստանում, հայկական դադթականությունը և հայկական խնդիրը»²⁰։

Այս ծրագիրը, ավելի ճիշտ՝ նախագիծը, որ ենթակա էր հետագա ճշգրտման ու լրացումների, ընդգրկում էր հայագիտության գրեթե բոլոր ընդհանուր

¹⁹ Նույն տեղում, էջ 375։

²⁰ Նույն տեղում, IV հատ., էջ 198—199։

վառները՝ պատմություն, հնագիտություն, բանահյուսություն, լեզու, գրականություն, արվեստ (ճարտարապետություն, երաժշտություն, նկարչություն), սակայն, ինչպես տեսնում ենք, շեշտը դրված է հայոց պատմության վրա, և առաջնահերթ է նկատված վերջին դարերի պատմությունն ու հայկական հարստությունը։ Այլ խոսքով, հատուկ ուշադրության են առնված, ինչպես այժմ ենք ասում, արդիական նշանակություն ունեցող հրատապ խնդիրները։

Ծրագրի իրականացման նյութական բազան պետք է ստեղծվեր համադրային հանգանակության միջոցով։ Միաժամանակ դրվում էր գրական ֆոնդի՝ գրողների ապահովության, գրականության պաշտպանության խնդիրը։ Ինչ վերաբերում է հայկական ակադեմիային, ապա, Պետերբուրգի հանձնաժողովի որոշումից դատելով, այդ անվան տակ հասկացվել է հայագիտական դասընթացներ կամ ֆակուլտետ, որ, ինչպես երևում է նույն որոշումից, պետք է կազմակերպվեին Գեորգյան ձեմարանի լսարանների հիմքի վրա։

Որքան էլ գեղեցիկ և հայրենի կուլտուրայի զարգացման համար կենսականորեն անհրաժեշտ լիներ այդ ծրագիրը, սակայն, նրան վիճակված չէր իրականանալ՝ ժամանակի հայ իրականության աննպաստ պայմաններում։

Այնուամենայնիվ, Թումանյանը և հայ առաջավոր մտավորականության այլ ներկայացուցիչներ չեն հուսահատվում, իսպառ չեն հրաժարվում այդ ծրագրից։ Եթե այն հնարավոր չէր կենսագործել ամբողջովին և միանգամից, ապա կարելի էր իրականացնել աստիճանաբար, քայլ առ քայլ։

1912 թվականին, ի հավերժացումն հայ գրերի գյուտի 1500-ամյա և տպագրության 400-ամյա հոբելյանի, հիմնադրվում են դպրոցական և գրական ֆոնդերը, կազմակերպվում է Հայ գրողների կովկասյան ընկերությունը։

Գրական ֆոնդի, այն է՝ գրողներին համախմբելու և նրանց նյութապես ապահովելու խնդիրը նոր չէր. 70-ական թվականներից սկսած, գրեթե յուրաքանչյուր տասնամյակ, առաջադրվել է այն, սակայն չի լուծվել։ Այդ փորձերից մեկը, որ արվել է 90-ական թվականների առաջին կեսին, կապված է նաև երիտասարդ Թումանյանի անվան հետ։ Գրողներին և գրականությունը ապահովելու հարցը հաճախ է արծարծվել նաև «Վերնատան» հավաքույթներին։ Եվ վերջապես, 1911 թ. հունիսին, երբ Հեոն մամուլում դնում է հայկական տպագրության 400-ամյակը տոնելու խնդիրը, Թումանյանը առաջարկում է «այդ մեծ կուլտուրական տոներ—ընդհանուր հայոց գրականության տոներ, մեծ հիշատակների, հոյակապ գործերի, փառավոր անունների տոներ... տոնը այն ամեն նվիրականի ու վսեմի, ինչ որ կարողացել է տալ և տվել է հայ ազգը» հավերժացնել գրական ֆոնդի հիմնադրումով։ «Ընդհանուր հայոց ազգի հիմնած մի ուժեղ ֆոնդ—հայոց գրականության համար»—գրում է Թումանյանը, հույս հայտնելով, որ «Այդ ֆոնդը կփոխեր հայոց ամբողջ գրականությունը, կյանքի քմահաճույքներից կաղատեր տաղանդավոր մարդկանց, խանդաված հներին գործի կղեր, սկսնակ նորերին ուժ կտար ու առաջ կքաշեր»²¹։

Եվ ահա, 1912 թ. հոկտեմբերին հիմնադրվում է և Թումանյանի նախագահությամբ, շուրջ մեկ տասնամյակ, գործում է Հայ գրողների կովկասյան ընկերությունը, որի գերը նշանակալի է քսաներորդ դարի առաջին քսանամյակին հայ հոգևոր մշակույթի զարգացման մեջ, և որի գործունեությունն արժանի է հատուկ ուսումնասիրության։ Ընկերության ծրագիրը լայն էր և բնավ

21. Նույն անդում, էջ 193—194.

չէր սահմանափակվում գրական ֆոնդի շրջանակներով: Հայ գրողների կովկասյան ընկերությունն ընդգրկում էր ոչ միայն գրողներին ու հրապարակախոսներին, այլև գիտնականներին, նպատակ ունենալով նաև հայագիտության զարգացումը: Այդ առավել ակնառու ցույց է տալիս ընկերության գործունեության ուսումնասիրությունը: Ընդլայնելով գրական ընկերության ծրագիրը, հիմնադիր անդամները, վարչությունը և հատկապես Թումանյանը ձեռնարկում էին գեթ նվազագույն չափով իրականացնել այն խնդիրները, որոնք Պետերբուրգի հանձնաժողովի ծրագրով առաջադրվում էին ապագա հայկական ակադեմիային և համալսարանին՝ քանի որ դեռևս այդ հաստատությունների ստեղծման համար պակասում էին անհրաժեշտ նախադրյալները:

Հայ գրողների կովկասյան ընկերությանը ևս վիճակված չէր գործել նպաստավոր պայմաններում: Նրա գործունեությունը գերազանցապես ընթացավ համաշխարհային պատերազմի տարիներին, քաղաքական մեծ իրադարձությունների թոհ ու բոհում:

Թումանյանը շատ խորն էր ապրում հայ ժողովրդին ճակատագրված աղետի ամբողջ ծանրությունը, բայց և բնավ չէր ընկճվում ու հուսալքվում, քանի որ անխորտակելի էր հոգու այն կորովը, որ նրան ներշնչում էր հայոց պատմության հալարամյա ընթացքը. «աշխարհավեր հեղեղների դիմագրավելով» է ապրել ու ստեղծագործել հայ ժողովուրդը և վերստին պիտի ապրի ու ստեղծագործի: Աղետին պետք է դիմագրավել, նրա դեմ մաքառել նաև հոգևոր զենքով, հայ գրով ու գրականությամբ, որ Թումանյանն համարում էր մեր ժողովրդի կենսունակության հզոր առհավատչյան:

Թեպետ և բախտը մեզ շատ հարվածեց
 Երկար զարեբով, ահեղ հարվածով,
 Թեպետ և էսպես ցրվեց, տարածեց,
 Զգեց հողեհող, փրոնեց ծովեծով,

Վկա է սակայն բովանդակ երկիր,
 Որ մենք կարեվեր ապրում ենք կրկին,
 Եվ ուր հասնում է հայի գիրքն ու գիր—
 Կենդանի է դեռ հայության ոգին...

Եվ իր փլատակ տրների տակից
 Ելնում է ահա հզոր ժողովուրդ,
 Իր վեհ ճակատին տանջանք ու թախիծ,
 Խորունկ հայացքում մեծ կյանքի խորհուրդ...

Սպհակ ու Մեսրոպ և շատ պանծալիք,
 Որ լըցրիք հայոց աշխարհքն ու սրտեր
 Լուսավոր կյանքի սիրով երջանիկ
 Ու ձրգտում արվիք—ձրգտել դեպի վեր,

Քանի որ դուք կաք, քանի կը մնաք
 Հոյակապ սյուներ հայության ոգու,
 Մենք միշտ անսասան առաջ պիտի՝ զնանք,
 Ինչքան մեր ճամբան լինի ահարկու...

Այս տողերը Թումանյանին ներշնչել է հայ տառերի գյուտի և տպագրության հոբելյանը, որին և ձոնված են նրանք՝ 1913 թվականին, համաշխարհային պատերազմի նախօրյակին: Հայ ժողովրդի կուլտուրական ուժի, նրա կենսունակության հավատով են տոգորված բանաստեղծի երկերը, նրա գրավոր և բանավոր ելույթները՝ մեծ աղետի տարիներին:

«Զարմանալի է մեր ազգի կենսունակությունը,—գրում է Թումանյանը 1916 թ. մարտին, Ալ. Սպենգլարյանի երեկույթի առթիվ.—Ես լիքն եմ էդ մեծ կենսունակության անսասան հավատքով... Եվ ոչ մի բռնակալ, և ոչ մի բարբարոս երբեք չի կարողացել նվաճել ու ընկճել հայկական ցեղի էգ հզոր հատկությունը: Ամեն անգամ, ամեն մի բռնակալի հայ ժողովուրդը կարող էր կրկնել Վարդանանց խոսքը, թե դու կարող ես հայի մարմինը տանջել, բայց նրա հոգու հետ ի՞նչ ես անելու...»

Եվ ահա, ինչպես ամեն ժամանակ, էնպես էլ էսօր շարժվում է հայ ազգի հզոր ու աննկուն ոգին: Մեծ աղետի օրերում էլ նա, ասես թե մի վերածնունդ նախատեսելով, շարժվում է լայնածավալ ու բազմակողմանի»²²:

Ուշագրավ է, որ Թումանյանը այդ գաղափարն արժարժում է նաև նույն 1916 թ. հոկտեմբերին՝ Մ. Աբեղյանի «Հայոց հին բանաստեղծությունը» նյութի մասին կարդացած դասախոսության առթիվ. «...Պ. Մանուկ Աբեղյանը,—գրում է Թումանյանը,—հայոց հին բանաստեղծության ելեջները, ուրախ ու տխուր էջերը բացատրելիս՝ մերթ-մերթ խորասուզվում էր հայոց պատմության մեջ, ցույց էր տալիս, թե ինչքան է հին էս ահռելի պատերազմը, որ էսօր վարում է հայ աղզը, թե սրանից ավելի մեծ աղետներ են տեղի ունեցել մեզ հույի վրա, և առաջ էր բերում պատմական զարհուրելի փաստեր...»

Թերևս վիճելի է, թե վաղը կամ մյուս օրը ի՞նչ քաղաքական վիճակ ենք ունենալու, բայց որ մեզանում սկսվելու է շատ վաղուց ի վեր չեղած մի կուլտուրական-ազգային ուժեղ շարժում՝ գոնե ես էդ համարում եմ անվիճելի»²³:

Մեծ աղետի օրերին հայ ժողովրդի կուլտուրական մաքառման մեջ նշանակալի է Հայ գրողների կովկասյան ընկերության և հատկապես Թումանյանի գերը:

Գրական ընկերության համեստ հարկի տակ ծնունդ էին առնում գեղեցիկ գաղափարներ ու ծրագրեր, որոնց մեծ մասի կենսագործումը վեր էր ընկերության հնարավորություններից և պահանջում էր համազգային, պետական հովանավորություն ու պաշտպանություն:

Արդ, որո՞նք են ընկերության հայագիտական ձեռնարկումներն ու մտահղացումները.

1. Ընկերությունը դասախոսություններ է կազմակերպել հայագիտության տարբեր բնագավառներն ընդգրկող թեմաներով: Ահա դրանցից մի քանիսը.

- ա) Հայ ճարտարապետության ընդհանուր տեսություն (Թ. Թորամանյան),
- բ) Հայոց հին բանաստեղծությունը (Մ. Աբեղյան),
- գ) Գրիգոր Նարեկացի (Մ. Աբեղյան),
- դ) Հայոց միջնադարյան առակները (Մ. Աբեղյան),
- ե) Սյաթ-Նոփեն Դավիթ եպիսկոպոս (Թումանյան),
- զ) Հայոց գրական լեզվի խնդիրը (Թումանյան),

²² Հ ո Վ հ. Թ ու մ ա ն յ ա ն, Երկերի ժողովածու, IV հատ., էջ 335:

²³ Նույն տեղում, էջ 369:

է) Հայ աշուղական երգեր (Գ. Լեոնյան),

ր) Աշխարհագրական ֆակտորի ազդեցությունը Հայաստանի պատմության և կուլտուրայի վրա (Ստ. Լիսիցյան),

թ) Հայ պատմիչների պատմա-փիլիսոփայական աշխարհայացքը (Հայկ Հովհաննիսյան),

ժ) Նոր լուսաբանություններ հաշ. Աբովյանի կյանքից (Լեո),

ժա) Նալբանդյանի, Րաֆֆու և Արծրունու նամակները (այստեղ հրապարակորեն առաջին խոսքն է ասվում հայ մեծ հեղափոխականի և մտածողի պետրոպավլովյան նամակների մասին) (Մին. Բերբերյան):

1916 թ. մայիսին գրական ընկերությունը, Թումանյանի նախաձեռնությամբ, ծրագրում է կազմակերպել հայ գրականության դասընթացներ: Ծրագրի իրականացման առջև դարձյալ ծառանում է նյութականի խնդիրը: Թումանյանը միջոցներ գտնելու մասին է մտածում. դիմում է Բաքվի գրասերների ընկերությանը, հույս ունենալով այնտեղի դրամատեր գրասերների (եթե այդպիսիք լինեին...) աջակցության վրա. «...Աշունքից էստեղ հայոց գրականության կուրսեր են բացվում,—գրում է նա Տիգրան Հովհաննիսյանին, որ Բաքվի հայ գրասերների ընկերության խորհրդի նախագահն էր:—...Արդյոք չի՞ կարելի, որ միանանք մենք ու գրասերների ընկերությունը—երկու սեմեստր, և էստեղ պահենք, և՛ էդտեղ... Միասին հեշտ կպահենք և ավելի ուժեղ»²⁴:

Հայ գրականության դասընթացների հարցը դրվում է Գրական ընկերության ընդհանուր ժողովին, որ տեղի է ունենում 1917 թ. մայիսի 3-ին Մ. Աբեղյանի նախագահությամբ: Ժողովը վարչությանն հանձնարարում է՝ մշակել դասընթացների ծրագիրը և հոգալ նյութական միջոցները: Առաջինը դուրին էր, երկրորդը՝ նվազ հուսալի²⁵: Վարչության մշակած ծրագրի համաձայն, դասընթացներում պետք է կարդացվեին հետևյալ առարկաները՝ ա) Հայոց գրականություն, բ) Հայոց պատմություն, գ) Արևելքի պատմություն, դ) Ընդհանուր գրականություն: Ցանկալի էր նկատվում հայոց գրականության հին և նոր շրջանները առանձնացնել և հանձնարարել հատուկ մասնագետների: Դասընթացների ունկնդիրներ կարող էին լինել միջնակարգ կրթություն ունեցող բազմաթիվներ և միջնակարգ դպրոցների բարձր դասարանների աշակերտները: Դասընթացների նյութական աղբյուրներ հանդիսանալու էին ունկնդիրների դասավճարները և բարեգործական հաստատությունների դրամական նպաստները:

Գրական ընկերության այս նախաձեռնությունը լայն արձագանք է գտնում բավական է ասել, որ գրական-պատմական դասընթացներին հաճախել ցանկացողների թիվը կարճ ժամանակամիջոցում հասնում է 600-ի²⁶:

2. Հայ գրողների կովկասյան ընկերության հայագիտական աշխատանքների ծրագիրն ընդգրկել է նաև գրական ժառանգության հրատարակության խնդիրը: 1913 թ. մարտին ընկերության վարչության նիստերից մեկում Լեոն հիշեցնելով, որ շուտով լրանում է Մերենցի, Րաֆֆու, Գար. Սրվանձտյանի մահվան 25-ամյակները, առաջարկում է հավաքել նրանց, ինչպես և այլ գործիչների գրավոր, անտիպ նյութերը, նամակներն ու դրագրությունները և մտածել դրանց հրատարակության մասին: Վարչությունը որոշում է այդ նյութերը

²⁴ Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, V հատ., էջ 413—414:

²⁵ Գրականության և արվեստի թանգարան, Հայ գրողների կովկասյան ընկերության ֆոնդ:

²⁶ Նույն տեղում:

պարբերաբար տպագրել «Դիվան հայոց գրականության» խորագիրը կրող ժողովածուներով: Այդ նպատակով ընտրված մասնախումբը (Հովհ. Թումանյան, Լեո, Գ. ք. Աղանյան) մշակում է մանրամասն ծրագիր, ըստ որի՝

1) Տարեկան հրատարակվելու էր «Դիվանի» երկու հատոր, յուրաքանչյուրը 500—600 էջ:

2) Ժողովածուներն ընդգրկելու էին՝ ա) հայ հեղինակների նամակները և նրանց ինքնուրույն, անտիպ երկերը. բ) մասնավոր անձանց այն նամակները, որոնք լուսաբանում են գրական այս կամ այն երևույթը, այս կամ այն հեղինակի կյանքն ու բնավորությունը. գ) հայ գրողների լուսանկարները և ֆաբսիմիլիները. դ) Ռուսաստանի սահմաններում լույս տեսած գրքերի և պարբերականների ցուցակը:

3. Ժողովածուներն ունենալու էին հատուկ անունների ցանկեր, իսկ տպագրված վավերագրերը՝ անհրաժեշտ ծանոթություններ:

4. Ցանկալի է համարվել

ա) Հավաքել և տպագրել նաև այն նյութերը, որոնք լույս են տեսել դանազան պարբերականներում:

բ) Մի որոշ գումար տրամադրել վավերագրեր ձեռք բերելու համար:

5. Ժողովածուների հրատարակության գործը պետք է հանձնվեր մի պատասխանատու խմբագրի՝ վարձատրելով նրա աշխատանքը (հատուկ կետով նշված է խմբագրի վարձատրության չափը՝ տարեկան 600 ռ.: Նույն կետում ավելացրած է, որ սրբագրությունը կատարելու է խմբագիրը՝ առանձին վարձատրությամբ):

6. Նյութերի ընտրությունը կատարելու էր խմբագիրը:

7. Ժողովածուները հրատարակվելու էին «Էմինյան ազգագրական ժողովածու»-ի դիրքով:

8. Տպագրության ծախս նախատեսվում էր տարեկան 2000 ռուբլի:

9. Վավերագրեր ձեռք բերելու նպատակին հատկացվելու էր տարեկան 400 ռ.²⁷:

Գրական ընկերության վարչությունը հաստատելով «Դիվան հայոց գրականության» ժողովածուների հրատարակության ծրագիրը, անհրաժեշտ է դրսևում «Դիվան»-ներում ավելացնել նաև «Հիշողություններ և հիշատակարաններ» բաժինը²⁸:

Վերահաս համաշխարհային պատերազմը, ապա նաև հայ ժողովրդին վիճակված մեծագույն աղետը, բնականաբար, ժամանակավորապես ընդհատում են Հայ գրողների ընկերության գործունեությունը, գրական-պատմական դասընթացների և «Դիվան հայոց գրականության» ժողովածուների հրատարակության ուղղությամբ տարվող աշխատանքները:

1916 թ. մայիսի 25-ին Գրողների ընկերության վարչության նիստում Թումանյանը կրկին արժարժում է «Դիվանի» հրատարակության խնդիրը, առաջարկելով Գ. ք. Աղանյանի, Մինաս Բերբերյանի և իր մոտ եղած նյութերից ընտրել և պատրաստել մի ժողովածու, միաժամանակ մամուլի միջոցով հայտարարել, որ անտիպ նյութեր ունեցողներն այդպիսիք ուղարկեն վարչության՝ առաջարկելով իրենց պայմանները: Նույն թվականի նոյեմբերին ընտրվում է

27 Գրականության և արվեստի թանգարան, Հայ գրողների կովկասյան ընկերության ֆոնդ:

28 Նույն տեղում:

նոր խմբագրական մասնաժողով, որ գրեթե նույն կազմն ուներ, ինչ որ նախկինը, միայն Լեոյի փոխարեն ընտրված էր Դ. Դեմիրճյանը։ Մասնաժողովն անցնում է գործնական աշխատանքների. դեկտեմբերի 18-ի նիստում կարդացվում են Արսեն Բաղրատունու, Ղ. Ալիշանի, Արս. Այտընյանի, Մկ. Խրիմյանի և Մ. Մամուրյանի նամակները։

Հայ գրողների կովկասյան ընկերության 1917 թ. մայիսի 3-ի ընդհանուր ժողովում, որին նախագահում էր Մ. Աբեղյանը, Թումանյանը հաղորդում է «Դիվանի» հրատարակության մասին։ Այդ հաղորդումից պարզվում է, որ հայ գրականության պատմության վավերագրերի այդ ժողովածուն ունենալու էր շատ լայն ընդգրկում՝ «հին ժամանակներից մինչև մեր օրերը», ըստ այդմ, այդտեղ տպագրվելու էին նյութեր նաև հայ հին գրականության վերաբերյալ։ Ընդհանուր ժողովը վարչությանը հանձնարարում է լույս ընծայել «Դիվան հայոց գրականության» ժողովածուն՝ «նայած հանգամանքներին», ըստ իր հանձնարարության²⁹։

Իսկ հանդամանքները գնալով ավելի աննպաստ էին դառնում նման մի շատ կարևոր, բայց մեծածախս ձեռնարկություն իրականացնելու համար։

3. Հայ գրականության պատմության վավերագրերի հրատարակության հետ մեկտեղ, Գրական ընկերությանը և Թումանյանին մտահոգել է դրանց (այդ վավերագրերի) պահպանության խնդիրը։ «Դիվան հայոց գրականության» ժողովածուի վերը հիշված ծրագրում հատուկ կետ կա այդ մասին. «Գնած և նվեր ընդունած վավերագրերը պահվելու են Ընկերության մեջ՝ կազմելով «Թանգարան հայոց գրականության»։ Թումանյանը 1914 թ. փետրվարին Մարգար Ավետիսյանին հասցեագրած նամակում ոգևորությամբ խոսելով Գրական ընկերության՝ հասարակության մեջ առաջ բերած հետաքրքրության մասին, Ընկերության նոր ձեռնարկումների շարքում թվում է նաև «Հայոց գրականության գրադարանը»³⁰։

1917 թ. հոկտեմբերին, Հայկազյան ընկերության գործով լինելով Պյատի-գորսկում, Թումանյանը որոշում է այդտեղից մեկնել նոր նախիջևան՝ որոշելու Միք. Նալբանդյանի ձեռագրերն ու գրադարանը Թիֆլիս փոխադրելու խնդիրը՝ կազմակերպվող «Հայոց գրականության թանգարանի» համար։ Սակայն Թումանյանին շտապ կանչում են Թիֆլիս, և նա վերադառնում է՝ հնարավորություն չունենալով իրականացնելու իր մտահղացումը³¹։

Նշանակալի է, որ դրանից մեկ տասնամյակ առաջ, 1908 թ. արժարժելով «Վերք Հայաստանի» վեպի տպագրության հիսնամյա հոբելյանը՝ «հայ մտքի այդ տոներ» «արժանավայել ձեռնարկություններով հավերժացնելու» գաղափարը, Թումանյանն առաջարկում է հիմնել «Կենտրոնական համազգային գրադարան կամ թանգարան...»³²։

4. 1914 թ. փետրվարին Մարգ. Ավետիսյանին ուղղած նամակում, որի մասին վերը հիշատակություն եղավ, Թումանյանը գրական ընկերության նոր ձեռնարկումներից է համարում նաև՝ «Գիտական առշավաճենեղեպի մեր գավառները»։ Դժվար չէ կոհհեղ, որ նման արշավախմբեր կազմակերպելու միջոցով բանաստեղծը, անշուշտ, նպատակ է ունեցել իրականացնելու իր վաղուց-

²⁹ Գրականության և արվեստի թանգարան, Հայ գրողների կովկասյան ընկերության ֆոնդ։

³⁰ Հ. Ն. Վ. Թումանյան, Երկերի ժողովածու, V հատ., էջ 397։

³¹ Հ. Ն. Վ. Թումանյան, Երկերի ժողովածու, V հատ., էջ 432։ «Кавказский край»։

³² Հ. Ն. Վ. Թումանյան, Երկերի ժողովածու, IV հատ., էջ 94։

վա, դեռևս 1894 թ. «Բորչալում» ուղեգրությունների մեջ արտահայտած ցանկությունը՝ հավաքել, փրկել կորստից ժողովրդական բանահյուսության գանձերը «մեր ազգային հոգու ծնունդները»:

5. Գրական ընկերությունը, բացի «Դիվան հայոց գրականության» ժողովածուներից, ծրագրել էր հրապարակել նաև «Հուշագրեր հայոց գրականության» — Ընկերության օրգանը, ինչպես տեղեկանում ենք Թումանյանի 1916 թ. հունիսի 3-ին Տ. Հովհաննիսյանին գրած նամակից:

Նթե «Դիվան»-ը, նրա մեջ տպագրվող վավերագրերով, ծառայելու էր հայ գրականության անցած ուղիների ուսումնասիրությանը, ապա «Հուշագրերը», լինելով Հայ գրողների ընկերության օրգանը, ինչպես պետք է ենթադրել լուսաբանելու էր հայ գրականության ժամանակակից խնդիրները, նպաստելու նրա հետագա դարգաշմանն ու բարգավաճմանը:

Ծրագրված կարևոր այդ հրատարակություններից ոչ մեկն էլ, ցավոք, չիրականացավ, իսկ Ընկերության գրական երեկույթներին կարդացված դասախոսությունների մատենաշարից տպագրվեց միայն Մ. Աբելյանի «Հայոց հին բանաստեղծությունը» (1917): Գրական ընկերությունը վերահրատարակեց Սալաթ-Նովայի երգերի ախվերդյանական ժողովածուն՝ ավելացնելով այն մոքանի խաղերը, որ Պետերբուրգի կայսերական գրադարանի ձեռագրերից հանել և «Աղգագրական հանդես»-ի X գրքում տպագրել էր Գ. Տեր-Աստվածատրյանը (Գեորգ Ասատուր):

Թումանյանի ուղադրությունից չի վրիպել հայագիտության բնագավառում կատարվող գրեթե ոչ մի աշխատանք, որին շմասնակցեր կամ որի արդյունքո՞չ գնահատեր, չխրախուսեր՝ բանավոր կամ գրավոր խոսքով: Նա եղել է Հայոց պատմական և հնագիտական ընկերության հիմնադիր-անդամներից մեկը, գործուն մասնակցություն ունենալով Ընկերության կանոնադրության մշակմանը, որի մասին են վկայում այդ վավերագրի՝ պետական կենտր. պատմական արխիվում պահպանվող սեագրության վրա Թումանյանի բնորոշ ձեռագրով արված ուղղումներն ու հավելումները:

Բանաստեղծի ուղադրությանն ու գնահատությանն արժանացած հայագիտական աշխատանքներից հիշենք Ա. Զոպանյանի «Նաղաշ Հովնաթան աշուղը և Հովնաթան Հովնաթանյան նկարիչը», Գար. վ. Հովսեփյանի «Մանրանկարչության արվեստը հայոց մեջ», Սահակ վ. Ամատունու «Հայոց բառ ու բանը», Հր. Աճառյանի «Հայերեն գավառական բառարանը», Թ. Թորամանյանի ուսումնասիրությունները հայկական ճարտարապետության մասին, հայ-վրացական բանասիրության հարցերին նվիրված նիկ. Մառի հետազոտությունները:

Թ. Թորամանյանի դասախոսությունների առթիվ գրած իր հոդվածում («Լսենք ու պաշտպանենք», 1914, մարտ), Թումանյանը անհրաժեշտ էր համարում, որ մենք մեր կուլտուրական արժեքների հանդեպ միայն հիացմունք արտահայտելուց անցնենք նրանց գիտական ընկալմանն ու իմաստավորմանը: «Մինչև այժմ նրանք (մեր երկիրը, մեր ժողովուրդը, մեր գրականությունը, մեր պատմությունն ու մեր պատմական հիշատակարանները) խոսել են մեր սրտի հետ, և մենք սիրել ենք զգացմունքով, անխտիր, հախուռն, առանց հասկանալու, թե ի՞նչ ենք սիրում և ինչո՞ւ. այժմ գալիս է ժամանակը՝ նրանի էությունը ներհմուտ լինելու, նրանց լեզուն ու միտքը հասկանալու...»³⁵:

35 Հոգ. Թումանյան, Երկերի ժողովածու, հատ. IV, էջ 294—296:

Մեր կուլտուրական արժեքները ճանաչելու, վերագնահատելու և իմաստավորելու կենսականորեն անհրաժեշտ այդ աշխատանքը կատարվելու էր հայագիտությանը նվիրված մասնագետների ձեռքով, որոնց համախմբելու և ապահովելու գործին Թումանյանը տվել է առաջնակարգ նշանակություն:

Ինչպես տեսանք, հայագիտության ազգային ֆոնդ, հայկական ակադեմիա և հայկական համալսարան հիմնելու Պետերբուրգի հանձնաժողովի ծրագիրը ձախողվելուց հետո, Թումանյանը ձգտում էր հայագիտական աշխատանքների կենտրոն դարձնել Գրողների ընկերությունը: Այդ ուղղությամբ նա որոշ քայլեր արեց, սակայն, ցանկալի արդյունքի չհասավ, չէր էլ կարող հասնել, և պարզ է, թե ինչու՝ Գրողների ընկերության միջոցները շատ սուղ էին նույնիսկ միայն գրական ֆոնդն ապահովելու համար:

Այնուամենայնիվ, Թումանյանը չի հրաժարվում իր հիմնական ծրագրից: 1916 թ. աշնանը պրոֆ. Սող. Եղիազարյանին, Հր. Աճառյանին և Յուլիկ Խանզադյանին գրած նամակներում նա վերստին արժարժում է հայկական համալսարան և հայկական ակադեմիա ստեղծելու խնդիրը: Այդ լուրջ գիտական ուսումնական հաստատությունների նյութական հիմքն ապահովելու համար միաժամանակ նա ծրագրում է կազմակերպել մի ընկերություն, որ կրելու էր Հայկազյան անունը: Ընկերության նյութական միջոցների աղբյուր հանդիսանալու էին անդամավճարները, անհատներից և հասարակական հաստատություններից ստացված նվիրատվությունները:

Հայկազյան ընկերությունը հիմնադրվում է 1917 թ. ապրիլին: Ընկերության նպատակները Թումանյանն ամփոփում է հետևյալ կետերում.

ա. «Մեր ազգային պատմության նյութերը... հավաքել գիտնականների, պատմագետների ձեռքով, ուսումնասիրություններ կատարել, մենագրություններ գրել (մոնոգրաֆիա), և հետզհետե պատրաստել մեր ազգի գիտական ճշմարիտ պատմությունը»:

բ. «...Հավաքել հայոց բարբառների, բովանդակ հայության լեզվական գանձերը, բառերն ու ոճերը, ամբարել, ուսումնասիրել ու օգտագործել, կազմել հայոց կենդանի լեզվի բառարանը, ստեղծել հայոց ազգային դրական լեզուն»:

գ. «...Համախմբել հայ գիտնականներին, ստեղծել գիտություն հայերեն լեզվով և հայ գիտնականների կաճառ, գիտության օջախ, հայկական ակադեմիա»:

դ. «...Ստեղծել հայոց համալսարան, ուր կարելի լինի գիտությունների ավանդել ու սովորել հայերեն լեզվով»:

ե. «...Ազգովին պաշտպանել հայոց գրականությունը, գրողներին կապել իրենց գործի հետ...»:

զ. «...Ուժեղ կերպով հովանավորել ու զարգացնել պեղարվեստի ամեն մի նյութը մեր մեջ»:

Հիշեցնելով, որ Ընկերությունը հիմնվում է «էս տեսակ ծանր օրերին», Թումանյանն ավելացնում է. «Զմոռանանք, որ հայ ժողովուրդը ինչ բարձր բան կատարել է, միշտ կատարել է՝ շնայելով նեղ ու դառն ժամանակին...»:

Նվ դրա մեջ բանաստեղծը տեսնում է մեր ժողովրդի մեծությունն ու «մեր կյանքի մեջ դրաման»³⁴:

34 Հ ո Վ հ. Թ ու մ ա ն յ ա ն, Երկերի ժողովածու, IV հատ., էջ 397—399:

1917 թ. մայիսի 31-ին Թիֆլիսի երաժշտական դպրոցի դահլիճում գումարվում է Հայկազյան ընկերության հիմնադիր ժողովը, ուր հանդես են գալիս Թումանյանը, Շիրվանզադեն, Լևոն Շանթը, Ստ. Մալխասյանը, Փ. Թերլեմեզյանը, Ստ. Կանայանը, Ֆեթվաճյանը և ուրիշներ:

Նույն թվականի հունիսի սկզբներին Թումանյանի նախաձեռնությամբ, նրա բնակարանում տեղի են ունենում Հայկազյան ընկերության ուսումնական ենթաժողովի նիստերը, մասնակցությամբ Մ. Արեղյանի, Ստ. Մալխասյանի, Լևոն Շանթի, Ստ. Լիսիցյանի, Սմբ. Տեր-Ավետիսյանի և մի քանի ուրիշների: Առաջին Լրկու նիստերին (հունիսի 7-ին և 9-ին) մասնակցում է նաև այդ նպատակի համար Պետերբուրգից հրավիրված Նիկ. Սառը, որ ընտրվել էր Հայկազյան ընկերության պատվավոր նախագահ:

Հունիսի 7-ի նիստը բաց անելով, Թումանյանը շնորհակալություն է հայտնում Նիկ. Մառին հրավերն ընդունելու և Ընկերության գիտական ճյուղի առաջին նիստին մասնակցելու համար: Հայտնում է նաև, որ Ընկերությունը իր հիմնադրման օրից մեծ հույսեր է կապել ականավոր գիտնականի հետ, որի «համակրությունն ու աջակցությունը խոշոր գրավական կլինեն Ընկերության նպատակների հաջող իրագործման»:

Նիկ. Մառն իր խոսքում անհրաժեշտ ու օգտակար է համարում թե՛ հայկական ֆակուլտետի և թե՛ ապագա հայկական համալսարանի գոյությունը «ոչ միայն հայերի ու Կովկասի, այլև գիտության համար ընդհանրապես... Կովկասում բացվելիք հայկական ֆակուլտետն ու համալսարանը, ինչպես և վրացականը, որ նույնպես մտադիր են հիմնելու, ոչ միայն լիակատար ծավալով կմշակեն կովկասագիտության բաղմամբիվ ճյուղերը, կովկասյան լեզուները, մեջն առած և բեկոագիտությունն ու կուլտուրան, այլև տեղական ազգային լեզուներով մշակելով գիտությունը, նրան մատչելի կդարձնեն ժողովրդին...»³⁵:

Այդ նիստերին, Նիկ. Մառի մասնակցությամբ, ենթաժողովը որոշում է, որ հայկական ֆակուլտետն ունենալու է Լրեք բաժանմունք (լեզվագիտական, մատենագիտական և պատմական), և մշակում ու հաստատում է դրանց ծրագրերը:

Հայկազյան ընկերության ուսումնական ենթաժողովը հունիսի 11-ին, նախորդ նիստում մշակած ծրագրի համաձայն, կազմում է հայկական ֆակուլտետի դասացուցակը՝ առաջիկա 1917/1918 ուսումնական տարվա համար:

Դասախոսների վարձատրության սկզբունքները մշակելուց հետո, ենթաժողովը անցնում է հայկական ֆակուլտետի համար դասախոսներ հրավիրելու հարցին. որոշվում է հրավիրել՝ Մերձավոր Արևելքի պատմության համար՝ Աշոտ Հովհաննիսյանին, գրաբարի համար՝ Ստ. Մալխասյանին, գրականության պատմության համար՝ Մանուկ Արեղյանին, Հայաստանի աշխարհագրության և հայոց պատմության համար՝ Ստ. Լիսիցյանին, ֆրանսերենի համար՝ Հրաչյա Անաոյանին:

Նիկ. Մառը տվել է իր համաձայնությունը առաջին կիսամյակում դասախոսելու ա) Հայ տառերի գյուտը և բ) Անիի պատմություն, ինչպես և սիս-

35 Թումանյանի տուն-թանգարան:

տեմատիկ ղեկավարելու այն ուսանողներին պարապմունքները, որոնք կուղենան աշխատել Անիում:

1917 թ. հոկտեմբերի 30-ի և նոյեմբերի 3-ի նիստերին ընկերության խորհուրդը որոշում է հայկական ակադեմիայի բնույթն ու կառուցվածքը և կատարում է անդամների ընտրություն: Հայկական ակադեմիան ունենալու է, հետևյալ մասերը. ա. հայագիտություն, բ. գեղեցիկ գրականություն, գ. գեղարվեստ:

Հայագիտության մասը առաջին հերթին ունենալու էր ա) լեզվի, բ) բանասիրության, գ) պատմության, հնագիտության և աշխարհագրության, դ) ազգագրության և իրավունքի ճյուղեր:

Հայագիտության բաժնի համար ընտրվում են իսկական անդամներ՝ Հր. Աճառյանը, Սմբ. Տեր-Ավետիսյանը, Մանուկ Աբեղյանը, Հակոբ Մանանդյանը և ազատ անդամներ՝ Գալուստ Տեր-Մկրտչյան (Միաբան), Մեսրոպ եպ. Տեր-Մովսիսյան, Գար. եպ. Հովսեփյան, Ստ. Մալխասյան: Պատվավոր անդամներ են ընտրվում Նիկողայոս Մառը և Նիկ. Ադունցը:

Հայկական ակադեմիայի գրական մասի համար իսկական անդամներ են ընտրվում՝ Հովհ. Թումանյանը, Ավ. Իսահակյանը, Շիրվանզադեն, Շանթը և Լեոն. գեղարվեստական մասի համար՝ Կոմիտասը և Նդիշե Թադևոսյանը: Թորոս Թորամանյանին ընտրելով ազատ անդամ, խորհուրդը որոշում է տալ նրան նյութական օժանդակություն՝ իր ճարտարապետական ուսումնասիրությունները շարունակելու համար:

Հայկական ակադեմիա և համալսարան ստեղծելու այս գեղեցիկ մտահղացումները, որ վկայում են Թումանյանի մտքի վսեմ սլացումների մասին, հասարակական-քաղաքական վայրիվերումների այն ժամանակներում, մնացին սոսկ ծրագրեր: Դրանք իրականություն դարձան սովետական կարգերում, երբ հայ ժողովուրդն ապրեց իր ազգային վերածնունդը և ձեռք բերեց պետականություն:

Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի քսանամյակին, հետադարձ հայացք նետելով նրա անցած ուղու վրա, սիրով և երախտագիտությամբ ենք հիշում մեր ազգային մեծ բանաստեղծին, որ երազել ու ձգտել է ստեղծելու հայրենի գիտության կաճառը: